

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԵՐ

ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ ՏԱՐԵՍԿԻԶԲ

Պատրիարք Սրբազան Հօր գլխաւորութեամբ եւ Միաբանութեան անդամներուն եւ ուսուցչական կազմին ներկայութեան, ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի 1995-1996 տարեշրջանի բացման արարողութիւնը տեղի ունեցաւ 7 Սեպտեմբեր, Հիմնադրութի առաւօտ ժամը 8ին, Վարժարանի սրահին մէջ, ընթերցումով «Սերմնացանի» առակին եւ շարականներու երգեցողութեամբ: Վերատեսուչ Տ. Դաւիթ Արք. Սահակեանի քաջալերական խօսքերէն յետոյ, Պատրիարք Սրբազան Հայրը վերյիշեց իմաստը սերմնացանի տարբեր հողաշերտերու մէջ ինկած սերմերուն, շեշտելով կարեւորութիւնը իրրել կրթեալ եւ նուիրեալ հոգեւորականներ պատրաստուելուն, ծառայելու համար Աստուծոյ եւ Սրբոց Յակոբեանց դարաւոր հաստատութեան ազգամուէր նպատակներուն:

Այս տարի եւս չորս նոր ուսուցիչներ եւ ժառանգաւորաց Ա. դասարանի համար ուսանողներ ընտրուած էին Հայաստանէն:

Իսկ Հոկտեմբեր 13ին, ուսուցիչներու ժողովը տեղի ունեցաւ, եւ անդրադարձումներ եղան աշակերտներու կենցաղին եւ կարգապահութեան, դասաւանդութեան եւ դասագիրքերու հետ կապուած հարցերու:

Սրբոց Թարգմանչաց Վարժարանի վերաբացումը տեղի ունեցաւ Երկուշաբթի առաւօտ Սեպտեմբեր 4ին: Պատրիարք Սրբազան Հայրը ուսուցչական կազմին առաջին հանդիպումը ունեցած էր Սեպտեմբեր 1ին, Պատրիարքարանի մէջ, ներկայացնելով տեսչութեան եւ ուսուցչական կազմին եւ թոշակներուն մէջ կատարուած փոփոխութիւնները:

Բացման արարողութեան ընթացքին,

աշակերտութեան եւ ուսուցիչներուն «Բարի Գալուստի» եւ քաջալերանքի բարի մաղթանքներ ըրաւ նոր նշանակուած տեսուչ Տ. Սահակ Արքեպա Մաշայեան, եւ Պատրիարք Սրբազան Հայրը ներկայացուց նաեւ Տ. Աւետիս Արքեպա Իփրանեանը՝ Տնտեսական Գործերու վարիչ, Պր. Եղիա Տիգրանեանը՝ փոխ-տեսուչ, Տիկիւն Արշալոյս Եագուպեանը՝ Աղջկանց հսկիչ, Պր. Յարութիւն Պետրոսեանը՝ մանչերու հսկիչ: Միաբան Հայրերու ընկերակցութեամբ, Պատրիարք Սրբազան Հայրը այցելեց Մանկապարտեզի, Նախակրթարանի եւ Երկրորդականի դասարանները:

Պատրիարքարանի մէջ, ուսուցիչներու երկրորդ ժողովը տեղի ունեցաւ Նոյեմբեր 10, Ուրբաթ յետ միջօրէին: Նկատի առնուեցան դաստիարակչական, կրթական, կիսամեայ քննութեանց, ծնողաց հետ համընդհանուր մեկնալու, տարուան ընթացքին աշակերտներու մասնակցութեամբ կազմակերպուելիք «Գիտութեան Մրցումներու», մշակութային երեկոյթներ կազմակերպելու հարցեր:

Հոկտեմբեր 21ին, Սրբոց Թարգմանչաց Տօնին առիթով, Վարժարանի սրահին մէջ ներկայացուեցաւ մշակութային յայտագիր մը: Նոյեմբեր 18, Շաբաթ կէսօրէ յետոյ, ծնողներ հրաւիրուած էին ուսուցիչներու հետ խօսակցութիւն ունենալու իրենց գաւակց իմացական եւ կրթական հարցերու մասին: Նոյեմբեր 24, Շաբաթ առաւօտ ժամը 10-12, ամբողջ աշակերտութեան եւ ուսուցչաց ներկայութեան տեղի ունեցան «Գիտութեան մրցումներ»: Դեկտեմբեր 23ին, «Կազանդ Պապան» այցելեց բոլոր դասարանները, բաժնելով իր նուէրները: